


Այս ատեն է որ յոյժ տկարացած Կիլիկիոյ թագաւորութեան վերջին հայրենասէր զօրքերը, առաջնորդութեամբ սպարապետ Ասպետ Լիպարիտի, փոքրաթիւ ուժերով կրցան քաղաքի կամուրջին մօտ հերոսաբար կռուելով կեցնել Մանչակի յառաջխաղացումը: Ասպետ Լիպարիտ շատերու նման ինկաւ հերոսի մահով:

Քանի մը տարի յետոյ Կիլիկիոյ պետութեան տկարացման կողքին ներքին կրօնական անհանդուրժողութեան եւ այլ պատճառներով, Մէմլուքներ կը յաջողին ձեռք անցնել բերդաքաղաքը, կը գերեվարեն Լեւոն Ե. Լուսինեանը եւ կը դրկեն Եգիպտոս:

Քոզանուած Սիսին հրաժեշտ կու տանք ծանր խոհերու ու խորհրդածութիւններու մէջ խորասուզուած: Ուղեղիս մէջ անընդհատ կը կրկնուի նոյն հարցումը. «Ո՞ր է մեր սխալը այս ողբերգութեան մէջ»:



Սմբատ Գունդստապի (Սպարապետ) որկած նամակը Կիպրոսի Հենրիկոս Ա.ին եւ Յովհաննէս Իբէլին, գրուած 1248-ին. բնագիրէն արտագրուած մէկ դար ետք:

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չըքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ վայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն իր բոյր դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ՝
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սուրիոյ,
Լեւոն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի գերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ,
Կըղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի,
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Միրոյն տալով վերջին բարեւ՝
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Նահապետ Ռուսինեան

